ԼՃԱՇԵՆԻ 1984—1985 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Սևանի շրջանի Լճաշենի տարածքում երեք տասնամյակ շարունակ կատարվում են հնագիտական պեղումներ։ Հայտնաբերված նյութերը ժամանակաշրջանի ընդգրկումով (մ. թ. ա. III—I հազարամյակ), հարստությամբ, բազմազանությամբ և ինքնատիպությամբ իրենց զուգահեռները չունեն Հայաստանի, Անդրկովկասի հուշարձանների թվում։ Այժմ էլ պեղումներով ի հայտ են գալիս նոր նյութեր, բացահայտվում նոր երևույթներ, որոնք առավել որոշակի են դարձնում եղած պատկերացումները նախնադարյան հասարակության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ։

Պեղումները շարունակվում են Լճաշենի ընդհանուր դամբարանադաշտի քիչ ուսումնասիրված 2-րդ և 3-րդ տեղամասերում։ 1984—85 ԹԹ. այնտեղ պեղվել են շուրջ երկու տասնյակ դամբարան, որոնցից ներկայացնում ենք առավել ուշագրավները։

2-րդ տեղամաս, № 43 կրոմլեխ—տրամագիծը 5,5 սմ տրամագծով, լավ մշակված ոսկրե թեշիկի գլխիկ։

Երկրորդ կմախքի մոտ դրված լայնաբերան կըճուճի մեջ կար բրոնզե միաձույլ դաստակով դաշույն, որի հետ նաև՝ փոքրիկ, աղյուսագույն լայնաբերան բաժակ։ Դաշույնի խողովակաձև դաս-

5,6 մ։ Դամբարանափոսի ուղղությունը հյուսիս-հարավ, ունի քարե պատեր, խորությունը 1,14, լայնությունը՝ 1, երկարությունը՝ 2,66 մ։ Հարավային ճակատապատի մոտ, հատակից 40 սմ բարձրությամբ պատրաստված է քարե պատվանդան, որի վրա դրված է լայնաբերան մեկ կճուճ. բերանի տրամագիծը՝ 28, բարձրությունը՝ 24, իրանի տրամագիծը՝ 38 սմ։ Թաղված են երկու մարդ, մեկը գերեզմանափոսի հյուսիսային կեսում, մյուսը՝ հարավային։ Երկուսն էլ կծկված են, մեկը աջ կողքի վրա, մյուսը՝ ձախ, դեմքով միմյանց դարձած։ Կմախքները լավ են պահպանված և փայտե դիապահպանակների տակ են։

Առաջին կմախքի վրա գտնվեց ագաթե և սարդիոնե 14 ուլունք, բրոնզե 4 մատանի՝ մեկը բարակ թիթեղից, մնացածը՝ բարակ, կլոր լարից։ Բացի այդ, հայտնաբերվեց 5 մմ հաստությամբ բրոնզե կլոր լարից պատրաստված երեք ապարանջան (երեքն էլ 5 սմ տրամագծով) և մեկ՝

Նկ. 1։

տակի կլոր գլխիկը ծակոտկեն բարակ թիթեղից վերադիր սուրբ շրջանակ ունի։ Դաստակի հետ միասին դաշույնի երկարությունը 29 սմ է, շեղբի հիմքի լայնությունը՝ 5 սմ, երկարությունը՝ 18։ Շեղբը երկու երեսից ունի երկայնակի անցնող 5 կանոնավոր ակոսագծեր, որոնց եղրային ակոսները հասնում են ծայրամասում (նկ. 1)։ Այս տիպի դաշույնները լայն տարածում ունեն ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի ուշ բրոնզեդարյան նյութերի հավաքածուներում։ Համանման դաշույններ են հայտնաբերվել Լճաշենի մ. թ. ա. XIV—XIII դարերի դամբարաններից[1] Արթիկից[2], Քեթիի մ. թ. ա. XII—X դարերին վերաբերող քարարկղային մի դամբարանից[3], Մեծամորի մ. թ. ա. XIV—XIII դարերին վերաբերող սև փայլաներկով խեցեղենի հավաքածուում։ Հանդիպում են նաև Վրաստանի, Ադրբեջանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարի նյութերում։

Լճաշենի 2-րդ տեղամասի դամբարանադաշտում մետաղե (բրոնզե) իրեր և առարկաներ համարյա չեն հանդիպում։ Այս տեսակետից 37 (որի նյութերը դեռևս չեն հրատարակվել) և 43 կրոմլեխների նյութերը լրացրին մեր պատկերացումները։

№ 43 դամբարանում գտնվել են նաև 15 կավաման՝ երկուսը նեղ բերանով, գեղեցիկ նախշաղարդերով, հինգը՝ լայնաբերան, գոտեպատվող փորագրաղարդերով, միջին մեծությամբ, սև փայլաներկով։ Սրանցից ամենափոքրը կանթ ունի, որ Լճաշենում հազվադեպ է պատահում։ Նեղ բերանով կճուճներից մեկի գոտին սեղանաձև, երեք փոքր-ինչ դուրս ցցված զարդերով է։ Հանդիպում է առաջին անգամ։ Եղած նյութերի աշխատանքներով կարելի է № 43 դամբարանը թվագրել մ. թ. ա. XIII դարով։

Կավամանների մեծամասնությունում կայքեն խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորների մնացորդներ, որոնք, անշուշտ, դրել են որպես սնունդ։ Ըստ երևույթին, ննջեցյալները ամուսիններ են եղել, կինը թաղվել է արդուզարդով, ամուսինը՝ դաշույնով, իսկ կավամանները հավասարապես գրվել են նրանց միջև։

№ 44 կրոմլեխ—գտնվում է նախորդի շարքում, 10 մ հեռավորության վրա։ Արտաքին նշաններով և չափերով նման է նախորդին, սակայն դամբարանափոսը համեմատաբար փոքր է. երկարությունը 1,5 մ, լայնությունը՝ 90 սմ, խորությունը՝ 1 մ։ Դամբարանում թաղված է մեկ մարդ՝ կծկված և ձախ կողքի պառկած, գլուխը՝ գերեզմանափոսի արևմտյան կողմում։ Կմախքի վրա անկյունաձև գրված են (1 մ երկարությամբ) փայտե երկու բարակ ձող, ծայրերը սուր են ու խանձված, հավանաբար դրանք նիզակներ են։

Ննջեցյալը կրել է հարուստ զարդեր (աղ. I, նկ. 1—13, աղ. II, նկ. 3, 4), 32 սմ երկարությամբ, 3 սմ լայնությամբ, 2 մմ հաստությամբ բրոնզե թիթեղից պատրաստված ճակատակալ (դիադեմա, աղ. I, նկ. 1), 6 սմ տրամագծով երկու ականջօղ, որից մեկը տափակ (աղ. I, նկ. 5), մյուսը՝ կլոր հաստ լարից (աղ. I, նկ. 6), ագաթից և դաշտային շաղախից պատրաստված 36 ուլունք (աղ. I, նկ. 7), 6 մատանի. երկուսը՝ կլոր լարից (աղ. I, նկ. 3, 10), չորսը տափակ (աղ. I, նկ. 2, 4, 6, 9) կախազարդեր՝ ականջօղի նման՝ 5 հատ (աղ. I, նկ. 11—13, աղ. II, նկ. 3, 4), որոնց վրա արված են 6-ական կլոր անցք, 2 հերաղարդ (աղ. II, նկ. 1, 2), բրոնզե մանյակ (աղ. II, նկ. 6), օբսիդիանե և կայծքարե, 2—3 սմ երկարությամբ, շեղբեր՝ նման նետասլաքի, մեկ փոքր կճուճ։ Ոսկորների մնացորդներ չկան, այսպիսի երևույթը ևս բացառություն է Լճաշենի դամբարանային թաղումներում։

№ 45 կրոմլեխ—տրամագիծը 3,5 մ է, դամբարանափոսի խորությունը՝ 70 սմ, լայնությունը՝ 90, երկարությունը 1,8 մ, ուղղությունը արևելքից-արևմուտք։ Դամբարանափոսի արևելյան մասում թաղված էր մեկ երեխա՝ ձեռքերն ու ոտքերը կծկված և աջ կողքի պառկած, գլխով՝ հարավ, ոտքերի կողմը՝ մեկ ոչխար։ Կմախքի առջևում մի խմբով դրված են տարբեր չափերի 5 կավանոթ՝ բոլորն էլ սև փայլաներկով։ Դամբարանի արևմտյան կեսը դատարկ է (նկ. 2)։ Կավանոթների կենտրոնում կուտակված է 66 ճան՝ 54-ը ոչխարի, 12-ը՝ խոշոր եղջերավորի։ Ննջեցյալի գանգը մարմնի համեմատությամբ շատ ավելի մեծ է։ Հավանաբար հիվանդ է եղել։

Դամբարանային նյութերի տվյալներով կարե-

---

[1] А. О. Мнацаканян, Раскопки на осушенной территории озера Севан («Советская археология», 1957, № 2, с. 48).

[2] Т. С. Хачатряи, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 176, рис. 86.

[3] Л. Петросян, Разведочные раскопки в Кети (1970), («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 4, էջ 215).

[4] Э. Ханзадян, К. Мкртчян, Э. Парсамян, Мецамор, Ереван, 1973, с. 35—36.

[5] Т. Н. Чубинишвили, Древнейшие археологические памятники Мцхета, Тбилиси, 1957, с. 101—102 (на груз. яз.), Р. Абрамишвили, К вопросу о датировке памятников эпохи древней бронзы и широкого освоения железа, обнаруженных в Самтаврском могильнике («Вестник Государственного музея Грузии», XIX-А и XIV-В, Тбилиси, 1957, рис. 200 и т. д.).

ԱՅՈՒՍԱԿ I



լի է որոշել ննջեցյալի՝ կենդանության ժամանակ ունեցած զբաղմունքը։ Տվյալ դեպքում այդ երեխան խաղացել է ճաներով։ Եղի այդ ձևը ազգագրական տվյալներով գալիս է հին ժամանակներից։ Գեղումների ժամանակ հաճախ են հանդիպում թե՛ մանր և թե՛ խոշոր կենդանիների ճաներ։ Թումանյանի շրջանի Լոռուտ գյուղի վաղ բրոնզեդարյան բրուտագործական արհեստանոցից, կույտի ձևով, գտնվել է 10 ճան։ Բայց այնքանակը, որ հայտնաբերվեց № 45 դամբարա-

նում, մեզ հայտնի չէ։ Արդյո՞ք 27 ոչխարի ս 6 կովի կամ էշան հանելը ինչ-որ խաղի համար սահմանված չափ չէ, գուցե ծիսակատարության նո՞րմ, որը դեռևս պարզված չէ։ Մի բան որոշակի է, որ այդ քանակությամբ կենդանիներ զոհաբերվել են ննջեցյալի պատվին։ Կարելի է ենթադրել, որ ննջեցյալը սպանվել է։ Դա հաստատում է դանգի (աջ քունքավերևում) 3×2 սմ չափի անցքը, որը, մեր կարծիքով, հարվածի հետևանք է։ Նման երևույթը Լճաշենում դիտվել է

ԱՂՅՈՒՍԱԿ II



որպես արապինացիայի փաստ։ Արդ՝ սպանվե՞լ է վերոհիշյալ ննջեցյալը, թե դանգի վիրահատումից է մահացել, կարող են բացահայտել մարդաբանները։

№ 46 կուրգանը—տրամագիծը 6 մ է, կողմպտված (հավանաբար 1983 թ.)։ Ստուգողական պեղումներով հայտնաբերվել է գիսպահպանակի տակ թաղված մեկ մարդու լավ պահպանված կմախք, երեք ամբողջական կավանոթներ և կավամանների չարդված բեկորներ՝ սև փայլանե-

կով և բրուտագործական դուրգի վրա պատրաստված, որոնք ստույգ թվագրվում են մ. թ. ա. XIII—XII դարերով։

№ 47 կրոմլեխ—տրամագիծը 6 մ է, ուղղվածությունը՝ արևելք-արևմուտք։ Քարե պատերով դամբարանափոսի խորությունը 75 սմ է, լայնությունը՝ 1 մ, երկարությունը՝ 1,30 մ։ Կմախքը բացվեց պպզած վիճակում, փայտե դիապահպանակի տակ։ Կմախքի վրայից գտնվեց 6 կախազարդ և մի քանի ուլունք, իսկ դամբարանում՝ 6 կավաման, որից 4-ը՝ լայնաբերան քրեղաններ, երկու կճուճ՝ մեկը լայնաբերան, մյուսը նեղ վզով և ուռուցիկ իրանով (աղ. III, նկ. 5)։ Նուրբ ու գեղեցիկ կախազարդերը պատրաստված են ծարիրից՝ կաղապատման եղանակով։ Դրանցից մեկը կիսալուսնի է նման (աղ. III, նկ. 7), եզրերը շրջանակաձև, վերին կենտրոնից (պռատված տեղից) վերից-վար իջնում է հինգ ակոսագիծ։ Դրանցից վերև՝ ձախակողմում 3, իսկ աջակողմում՝ մեկ փոքր անցք կա։ Մյուս 5 կախազարդերը անվաձև են (աղ. III, նկ. 9—12), մակերեսի վերին մասում ունեն դուրս ցցված ելուստներ՝ կախելու համար արված անցքերով։ Կախազարդերի շրջանակները պատված են կտրվածքազարդերով, մեկինը՝ եռանկյունաձև փոքր անցքերով (աղ. III, նկ. 8)։ Նման կախազարդեր մեզ հայտնի են միայն Արարատի շրջանի Վանաշենի դամբարանային նյութերից և թվագրվում են մ. թ. ա. XII դարով[6]։ Ուլունքները պատրաստված են կարմիր օխրայի և մանրահատիկ սպիտակ ավազի շաղախից, որոնք կոնաձև են և զարդարված լայնակի ակոսագծերով։ Դիապահպանակը անհամեմատ մեծ ոտքեր ունի, քան մինչ այդ հայտնաբերվածները, հավանաբար նընշեցյալի պպզած դիրքին համապատասխան լինելու համար։ Դիապահպանակի տակ, դամբարանի արևելյան ճակատապատի մոտ, հայտնաբերվեց մեկ ոչխարի ամբողջական կմախք։ Դամբարանի հատակը ծեփված էր կավով։ Կավանոթները պատրաստված են բրուտագործի դուրգի վրա և մեծամասամբ ունեն սև փայլաներկ ու պարզունակ փորագրազարդեր։ Հանդիպում են նաև հպազարդերով կավանոթներ։ Թվագրվում են մ. թ. ա. XIII—XII դարերով։

№ 48 կրոմլեխ—չափերով և թաղման ձևով նման է № 43—46 կրոմլեխներին։ Հայտնաբերվել են մի մարդու լավ պահպանված կմախք և երեք լայնաբերան, իրանագոտով շուրջանակի անցնող փորագրագծերով քրեղաններ։

№ 49 կրոմլեխ—գրեթե զուրկ է արտաքին նշաններից։ Փորձը ցույց է տվել, որ Լճաշենի 2-րդ տեղամասի դամբարանադաշտում, դամբարանների կանոնավոր շարքերից դուրս, կան կլոր, հրապարակաձև տարածություններ, որտեղ բուսականությունը միանգամայն տարբերվում է շրջապատում եղածից։ Ստուգողական պեղումներով պարզվել է, որ դրանք մ. թ. ա. 2-րդ հազարամյակի սկզբին վերաբերող դամբարաններ են, որոնց տարածքում դարեր անց կատարվել են նոր թաղումներ։ Պեղման ժամանակ դետնի հարթ երեսից, մեկ մետր խորությամբ, բացվեցին ծածկի քարերը, որոնք ընդլայնակի դրված էին գերեզմանափոսի վրա։ Պարզվեց, որ այն կառուցված է ավազաշերտի մեջ։ Այստեղից գտնվեցին մեկ մարդու ոչ ավարտ պահպանված կմախք և կավամանների բեկորներ՝ խմորած սև և կարմիր դույնի։ Ըստ երևույթին, դամբարանը հնագույնում (թաղումներ կատարելու ժամանակ) քանդվել է և քարերի մի մասն օգտագործվել, գուցե և՝ կողոպտվել, որի հետևանքով ամբողջական մնացած նյութեր չեն հայտնաբերվել։

№ 50—58 կրոմլեխները իրենց չափերով, կառուցվածքով և դամբարանային նյութերով կրկնում են վերը նկարագրված № 43—46 և 48 կրոմլեխներին։ Ծուրաքանչյուր դամբարանում թաղված է մեկ մարդ՝ 3—8 կավամաններով, առանց արդուպարզի և մետաղե իրերի։

Առանձին ուշադրության են արժանի Լճաշենի դամբարանադաշտի երրորդ տեղամասում պեղված դամբարանները։ Դրանք գտնվում են Չկալովկա գյուղի մոտ և պայմանականորեն ստացել են Չկալովկայի հատված անունը։ Այս դամբարանադաշտը սկսվում է գյուղամիջից և, դեպի արևելք ձգվելով, հասնում Նորաշեն, ընդգրկելով Սևան—Կամո տանող ավտոխճուղու աջակողմյան խորխորատները, բլրալանջերը, փոքր հարթությունները և գոգավորությունները, որոնց գերակշռող մասը ծածկված է եղել լճի ջրերով։ Այստեղ նկատվում են կուրգաններ, կրոմլեխներ, քարակղեր և հին բնակատեղիներ։ Որոշ տեղերում կան պարսպապատ գոգավոր «կղզյակներ», որոնցում նկատելի են կլոր և քառակուսի հատակագծերով բնակարանների հետքեր։ Այս հատվածում պեղել ենք երկու դամբարան։

№ 1 կրոմլեխ—գտնվում է Չկալովկայի մուտքի ճանապարհի եզրին, անասնապահական գոմերի մոտ։ Արտաքին շերտը հեռացնելուց հետո, ծածկի քարերին չհասած, բացվեց 6 մարդու գանգ՝ իրար կպած ու մի շարքի շարված։ Գանգերից ցած հայտնաբերվեցին ջարդված ու անկանոն վիճակում կուտակված կմախքների մասեր։ Դրանց մեջ կար 16 ազդրոսկր, մինչդեռ 8-ի փոխարեն գտնվել է 6 գանգ։ Թաղման այս ձևը անսովոր է ու նորություն։ Սևանի ավազանի նախկին պեղումների ժամանակ նույնպես նկատվել է մեկ առանձին գանգի կամ մարմինը մասերի-

---

6 «Սովետական Հայաստան», 1985, № 9, էջ 30, 31։

Նկ. 2։



բաժանված մեկ մարդու թաղում7։ Այստեղ կը-մախքի ոսկորների մեջ կար լավ ձևավորված, 11 սմ երկարությամբ ոսկրե ելուստավոր նետասլաք, իսկ դամբարանափոսում, անկանոն լցված քարերի մեջ, մեկ ոչխարի առջևի ոտքից պատրաստված ձևավոր ղորձիք, որն, ըստ երևույթին, օգտագործվել է կավանոթների նախշազարդման համար։ Դրանցից զատ գտնվեցին նաև սև, մոխրագույն, խամրած կավանոթների բեկորներ, որոնք վրա նկատելի են լայնակի արված փորագրագծեր.

№ 2 կուրգանը—գտնվում է նախորդից 20 մ հեռավորության վրա, արտաքին նշաններով և տրամագծով համընկնում է առաջինին։ Գետնի երեսից 45 սմ խորության մեջ, ծածկի քարերն չհասած, հայտնաբերվեց մեկ երեխայի գանգ՝ առանց կմախքի։ Դամբարանափոսում, խոշոր ու միջին մեծության քարերի մեջ խառնված, հայտնաբերվեցին խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ և գորշավուն, սև խամրած և կարմրագույն խեցու բեկորներ։ 1,8 մ խորության մեջ, մայր հողի վրա, բացվեց երեխայի գանգի բեկոր՝ առանց ուղեկցող իրերի։

Նշած նյութերի, հատկապես խեցեղենի, տիպերով երկու դամբարանն էլ կարելի է թվագրել մ. թ. ա. 2-րդ հազարամյակի սկզբներով։ Դրանք գետնափոսային դամբարաններ են։

Այսպիսով՝ լճաշենի 1984—85 թթ. պեղումներով ձեռք բերված նյութերի մի մասը նորություն է։ Նախկին պեղումների ժամանակ լճաշենի դամբարանադաշտի 2-րդ և 3-րդ տեղամասերից մետաղե իրեր չեն հայտնաբերվել, և թերի էին մեր պատկերացումները, ինչ-որ տեղ նաև՝ մտածելի, թե այդ հատվածի մշակույթը կարո՞ղ է առնչություն չունենալ լճաշենի հանրահայտ մշակույթի հետ։ Այժմ գտնված բրոնզե դաշույնները, ապարանշանները, մանյակները, մատանիները, ականջօղերը և ծարիրե կախաղարդերը լրացնում են այդ բացը։ Հատկանշական են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների 66 վեգերի թաղումը երեխայի հետ, մարմինը մասերի բաժանված կոլեկտիվ և միայն գանգերի թաղումները, դամբարանափոսում ննջեցյալների գլխի կողմում պատրաստված քարե հատուկ պատվանդանները։

Նոր պեղումներով հաստատվեց, որ լճաշենի դամբարանադաշտը շատ ավելի վաղ (քան այնտեղ թաղումներ կատարվելը) գտնվել է լճի ջրերի տակ։ Նման երևույթ նկատելի է 1-ին տեղամասի № 7, 8, 14, 40, 43 դամբարանների գերեզմանափոսերի կտրվածքներում։ Հայտնաբերվել է նաև լճաշենյան հայտնի դամբարանադաշտի նոր հատված (Զկալովկայի հատվածը), որը վերջերս է շրջապատվել։ Նույն տարածքում կան նաև կլոր և քառակուսի հատակագծերով բնակարանների հետքեր։

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

---

7 Վ. Վ. Ավետյան, Լճաշենի ուշ բրոնզեդարյան տնտեսության հիմնական ձևերը (թեկ. դիս., Երևան, 1970, էջ 180)։